

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	3
1.4. Առևտուր	4
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ՓՈԽԱՐԺԵՔ	6
4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	7
4.1. Բյուջեի եկամուտները	7
4.2. Բյուջեի ծախսերը	9
4.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	9
4.4. Պետական պարտք	10
5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	11
5.1. Գնաճ	11
5.2. Ավանդներ	12
5.3. Վարկեր	13
5.4. Դրամական փոխանցումներ	14
6. ԱՄՓՈՓՈՒՄ	15

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ


2023 թվականն ամփոփվեց բավական բարձր՝ 8.7% տնտեսական աճով, որը պայմանավորված էր 2022թ. բարձր տնտեսական աճի գործոնների որոշակի պահպանմամբ, զբոսաշրջության աճով, ինչպես նաև 2023թ. տարեվերջին կտրուկ՝ մեծ թափ ստացած ոսկերչական գործունեությամբ: Այդ գործոններից վերջինը, թեև առավելապես ընկալվում է որպես կարճաժամկետ երևույթ, շարունակել է իր ազդեցությունն ունենալ տնտեսական ակտիվության վրա 2024 թվականին: Արդյունքում, տարին սկսել է բավական բարձր տնտեսական ակտիվության աճով, որը, սակայն, ավելի փոքր է, քան նախորդ տարվա նույն ամսվա աճը: Այսպես, 2024 թվականի հունվարին տնտեսական ակտիվության աճը կազմել է 10.7%՝ նախորդ տարվա հունվարի ցուցանիշից ցածր լինելով 0.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2024թ. հունվարի ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և արդյունաբերության աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 8.2 և 4.5 տոկոսային կետ: Տնտեսական ակտիվության աճին դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար 1.0 և 0.5 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2024թ. հունվարին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Արդյունաբերության¹ ոլորտում գրանցվել է բավական բարձր աճի տեմպ: Արդյունաբերության աճը 2024թ. հունվարին կազմել է 21.0%՝ շարունակելով նախորդ տարվա վերջի բարձր աճերը: Վերջինս էլ իր հերթին պայմանավորված էր ոսկերչական արտադրատեսակների արտադրության բավական բարձր աճով, որը, ըստ էության, իրենից ներկայացնում է վերաարտահանում:

¹ Արդյունաբերության հունվար ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ոլորտում աճի տեմպը որոշակիորեն նվազել է նախորդ տարվա համեմատ: 2024թ. հունվարին շինարարության աճը կազմել է 9.5%՝ շուրջ 2.7 տոկոսային կետով ցածր լինելով նախորդ տարվա հունվարի աճից, և շուրջ 6 տոկոսային կետով՝ նախորդ տարվա միջին ամսական ցուցանիշից:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների² ոլորտում աճի տեմպը կտրուկ դանդաղել է նախորդ տարվա սկզբի համեմատ: Ծառայությունների ոլորտում 2024թ. հունվարին գրանցվել է 4.4% աճ, ինչը բավական ցածր է նախորդ տարվա հունվարի

² Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաօլորտների, հունվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ցուցանիշից, և շարունակում է նախորդ տարվա վերջին ամիսների ցածր աճի տեմպերը:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի աճը, սակայն, շարունակում է պահպանվել բարձր մակարդակում:

Ի տարբերություն տնտեսության մյուս ճյուղերի՝ առևտրի ոլորտում տարվա առաջին ամսվա տվյալներով գրանցվել է բարձր աճ՝ շուրջ 19.3%՝ գերազանցելով նախորդ տարվա հունվարի ցուցանիշը շուրջ 1.6 տոկոսային կետով: Առևտրի աճի բարձր տեմպի պահպանումը հավանաբար ևս պայմանավորված է ոսկերչական արտադրանքի վերաարտահանման գործընթացով, ինչի մասին առավել հստակ դատողություններ հնարավոր կլինի անել առևտրի կառուցվածքի հրապարակումից հետո:


2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ³

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման ծավալը զգալիորեն աճել է նախորդ տարվա հունվարի համեմատ՝ պայմանավորված վերաարտահանման նոր տեսակով: 2024թ. հունվարին արտահանման ծավալը գրեթե կրկնապատկվել է նախորդ տարվա հունվարի համեմատ՝ աճելով շուրջ 107.9%-ով (2.1 անգամ): Թեև հունվար ամսվա արտահանման կառուցվածքը դեռևս չի հրապարակվել, սակայն անցած տարվա աճի արագացման վերլուծությունը ցույց է տալիս, որ արտահանման էական աճը պայմանավորված է ոսկերչական արտադրանքի վերաարտահանման հետ:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %




Ներմուծման աճի տեմպը նույնպես բավական բարձր է եղել 2024թ. հունվարին՝ կազմելով շուրջ 61.4%: Ներմուծման ծավալների բարձր տեմպը

³ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, հունվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

նույնպես պայմանավորված է վերը նշված ոսկերչական արտադրանքների ներմուծման և արտահանման երևույթով: Սակայն այն առավել մանրամասն հնարավոր կլինի վերլուծել արտաքին առևտրի կառուցվածքի հրապարակումից հետո (որն արտացոլված կլինի հաջորդ ամսվա տեղեկանքում):

3. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 9. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



2024թ. հունվարին ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ եղել է արժեզրկված, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ արժևորված: Դրամի միջին


փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ հունվարին կազմել է 405 դրամ՝ նախորդ տարվա հունվարի համեմատ արժեզրկվելով 2.2%-ով: Եվրոյի նկատմամբ արժեզրկումը կազմել է 3.2%: ՌԴ ռուբլու նկատմամբ, ՀՀ դրամի արժևորման տեմպի արագացումը սկսվել էր դեռևս նախորդ տարվա կեսից և շարունակվում է նաև 2024 թվականին՝ հունվարին կազմելով 25.8%:

4. ՀԱՐԿԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

4.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտներն աճել են, սակայն ցածր տեմպով: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2024թ. հունվարին աճել են 7.2% այն դեպքում, երբ նախորդ տարվա հունվարին եկամուտների աճը կազմել էր 15.0%: Հարկային եկամուտների աճը ավելի ցածր է եղել՝ 6.8%, մինչդեռ բավական բարձր աճի տեմպ է գրանցվել ոչ հարկային եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների գծով՝ համապատասխանաբար 17.3% և 15.6% (թեև դրանց ծավալները բավական փոքր են՝ համապատասխանաբար 6.5 և 0.3 մլրդ դրամ):

Գծապատկեր 10. Հարկային եկամուտների կուտակային աճը⁴, %



Հարկային եկամուտների աճը 2024թ. հունվարին առավելապես պայմանավորված է եղել շահութահարկի (աճը՝ 79.5%) և ակցիզային հարկի (աճը՝ 22.6%) աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.8 և 2.2 տոկոսային կետ: Հարկային եկամուտների աճին նպաստել են նաև բնապահպանական և բնօգտագործման վճարները (նպաստումը կազմել է շուրջ 1.6 տոկոսային կետ), որոնք աճել են՝ նախորդ տարվա -0.4 մլրդ դրամից դառնալով 2.3 մլրդ դրամ: Փոխարենը բացասական նպաստում են ունեցել ԱԱՀ-ի և

⁴ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

Եկամտային հարկի գծով մուտքերը՝ համապատասխանաբար 2.7 և 0.2 տոկոսային կետով:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2023թ. հունվար		2024թ. հունվար	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	15.3	15.3	6.8	6.8
Ավելացված արժեքի հարկ	19.8	7.3	-7.1	-2.7
Ակցիզային հարկ	9.4	1.0	22.6	2.2
Շահութահարկ	19.9	0.7	79.5	2.8
Պետական տուրք	-57.8	-3.3	22.1	0.5
Մաքսատուրք	-16.0	-0.7	12.6	0.4
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ ⁵	-	3.6	-	1.6
Այլ հարկեր	16.9	0.6	3.5	0.1
Շրջանառության հարկ	35.2	2.1	13.2	0.9
Եկամտային հարկ	7.7	2.4	-0.6	-0.2
Սոցիալական վճարումներ	49.0	1.8	27.2	1.3

⁵ Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքերը նախորդ տարվա հունվարին եղել են բացասական՝ -0.4 մլրդ դրամ (հիմնականում վերադարձների աճի հետևանքով), ինչի պատճառով, աճի տեմպը հաշվել հնարավոր չէ:

4.2. Բյուջեի ծախսերը


Գծապատկեր 11. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերը՝ հատկապես ընթացիկ ծախսերը, աճել են բավական բարձր տեմպով: Ընդհանուր ծախսերը 2024թ. հունվարին կազմել են 115.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա հունվարի համեմատ աճելով 23.3%-ով: Ընդ որում, աճը հիմնականում պայմանավորված է ընթացիկ ծախսերի շուրջ 26.5% աճով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով ծախսերը էականորեն նվազել են՝ շուրջ 71.1%-ով (նախորդ տարվա 3.1 մլրդ դրամից դառնալով 0.9 մլրդ դրամ): Սակայն նվազման հիմնական պատճառը ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի աճն է, որը ինչպես հայտնի է, գրանցվում է ծախսերի կազմում բացասական նշանով: Կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը) աճել են 1.8 մլրդ դրամով՝ կազմելով 5.0 մլրդ դրամ:

4.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



Հունվար ամսվա դրությամբ պետական բյուջեն եղել է հավելուրդային: 2024թ. հունվարին ՀՀ պետական բյուջեի եկամուտները գերազանցել են ծախսերը, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի հավելուրդ՝ շուրջ 68.6 մլրդ դրամի չափով: Վերջին տարիներին հավելուրդային բյուջեի ձևավորումը տարվա սկզբի ամիսներին դարձել է բնականոն երևույթ:


4.4. Պետական պարտք

2023թ. վերջի դրությամբ պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը պահպանվել է 50%-ից ցածր մակարդակում: 2024թ. հունվարին պարտքի անվանական ծավալի աճը շարունակվել է: 2023թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 48.1%՝ շուրջ 1.4 տոկոսային կետով աճելով նախորդ տարվա համեմատ, սակայն մնալով 50%-ից ցածր մակարդակում: Պետական պարտքի (որը ներառում է նաև ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը) հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 50.5%:

2024թ. հունվարին պետական պարտքի ծավալը (արտահայտված ԱՄՆ դոլարով) նախորդ տարվա հունվարի համեմատ աճել է 11.6%-ով՝ հասնելով 11.9 մլրդ ԱՄՆ դոլարի: Կառավարության պարտքը աճել է 12.5%-ով՝ կազմելով 11.4 մլրդ ԱՄՆ դոլար, որի կազմում ներքին պարտքն (արտահայտված ՀՀ դրամով) աճել է 32.5%-ով, իսկ արտաքին պարտքը (արտահայտված ԱՄՆ դոլարով)՝ 0.2%-ով: Արտաքին պարտքի ծավալը 2023թ. դեկտեմբերի համեմատ չի փոխվել:

2024թ. հունվարին պետական պարտատոմսերի տոկոսադրույքները նախորդ տարվա հունվարի համեմատ գտնվել են ավելի ցածր մակարդակում: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2024թ. հունվարին կազմել է 10.6% (դեկտեմբերի համեմատ մնալով անփոփոխ)՝ նախորդ տարվա հունվարի համեմատ լինելով 1.0 տոկոսային կետով ցածր: Նույն չափով նվազել է նաև երկարաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը՝ 2024թ. հունվարին կազմելով 11.0%:


Գծապատկեր 13. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Գնաճ


Գծապատկեր 14. 12-ամսյա գնաճ, %



2024թ. սկսվել է գնաճի բացասական տեմպով: Նախորդ տարվա կեսից սկսած՝ գնաճը գտնվում է բավական ցածր մակարդակում՝ տատանվելով 0-ի շուրջ: 2024թ. հունվարին նախորդ տարվա հունվարի համեմատ գնաճը կազմել է -0.9%: Կենտրոնական բանկը դեռևս նախորդ տարվանից, արձագանքելով գնաճային միջավայրի փոփոխություններին, աստիճանաբար նվազեցրել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը, ինչը շարունակվել է նաև 2024թ. հունվարին, երբ ԿԲ-ն ևս 0.5 տոկոսային կետով նվազեցրել է տոկոսադրույքը: Սակայն դեռևս գնաճի տեմպերի փոփոխություն չի նկատվում:


5.2. Ավանդներ

Գծապատկեր 15. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների ծավալը շարունակում է աճել նախորդ տարվա համեմատ: Ընդհանուր ավանդների աճը 2024թ. հունվարին նախորդ տարվա հունվարի համեմատ կազմել է 9.4%, սակայն 2023թ. դեկտեմբերի համեմատ ավանդների ծավալը նվազել է 2.1%-ով: Նախորդ տարվա համեմատ ավանդների ծավալի աճը հիմնականում պայմանավորված է եղել ռեզիդենտներից ներգրավված ավանդների շուրջ 16.4% աճով, մինչդեռ ոչ ռեզիդենտների ավանդները նվազել են 8.8%-ով:

Գծապատկեր 16. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին 2024թ. հունվարին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 8.8 տոկոսային կետով:

Ոչ ռեզիդենտների ավանդների նվազումը ընդհանուր ավանդների աճին հակազդել է 2.5 տոկոսային կետով:

5.3. Վարկեր⁶

Ի տարբերություն ավանդների, վարկերի աճի՝ նախորդ տարվա վերջի բարձր տեմպերը շարունակում են պահպանվել նաև 2024 թվականին: 2024թ. հունվարին ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 22.0%-ով:


Գծապատկեր 17. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %



Վարկերի աճը տեղի է ունեցել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի հաշվին, որոնց աճերը կազմել են համապատասխանաբար 21.7% և 26.3%, իսկ նպաստումները՝ 20.6 և 1.4 տոկոսային կետ:

⁶ Վարկերի ոլորտային բաշխման վերաբերյալ 2024թ. հունվար ամսվա վիճակագրությունը դեռևս չի հրապարակվել:


Գծապատկեր 18. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 11.8 և 10.0 տոկոսային կետ:

5.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 19. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար⁷



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը 2023թ. հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա համեմատ եղել է ցածր

⁷ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկրի կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:
2024թ. հունվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

մակարդակում: 2023 թվականին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 1.7 մլրդ ԱՄՆ դոլար, որն էականորեն ավելի ցածր է նախորդ տարվա 2.6 մլրդ ԱՄՆ դոլարից: Հատկանշական է, որ զուտ ներհոսքի նվազումը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից արտահոսքի աճով, որի ծավալը 2023 թվականին կազմել է շուրջ 4.0 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2022թ. 2.6 մլրդ դոլարի համեմատ աճելով շուրջ 55.0%-ով: Մինչդեռ ներհոսքը նույն ժամանակահատվածում աճել է ընդամենը 9.7%-ով՝ կազմելով 5.7 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 5.2-ի դիմաց:

6. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2023թ. վերջում թափ առած ոսկերչական գործունեության աճն ապահովել է նաև 2024թ. հունվարի բարձր տնտեսական ակտիվության աճը: Տնտեսական ակտիվության ցուցանիշը հունվարին կազմել է 10.7%՝ հիմնականում պայմանավորված լինելով արդյունաբերության և առևտրի աճերով: Վերջիններս էլ արտացոլում են ոսկերչական գործունեության կտրուկ աճը, ինչն իրենից ներկայացնում է ոսկու ներմուծման, վերամշակման (որոշակի վերապահումներով) և արտահանման գործընթաց: Բնականաբար, տնտեսական աճի առումով սա դրական երևույթ է ՀՀ տնտեսության համար, սակայն մտահոգիչ է այն, որ տնտեսության մյուս ոլորտներում արձանագրվում է աճի տեմպի դանդաղում կամ անկում (հաշվի առնելով նաև նախորդ տարվա ցուցանիշների վերլուծությունը), ինչը կարող է հանգեցնել մակրոտնտեսական կայունության նվազմանը:

2. Տնտեսական աճ ապահովող գործընթացները կարծես թե նույն տեմպով հարկային եկամուտներ չեն գեներացնում: 2024թ. հունվարին տնտեսական ակտիվության աճն էական չափով գերազանցում է հարկային եկամուտների աճին (եթե ՏԱՑ-ը ճշգրտենք գնաճով, ապա տարբերությունը փոքր-ինչ կկրճատվի): Իհարկե, հունվարի հարկային եկամուտները որոշ չափով պայմանավորված են նաև նախորդ տարվա դեկտեմբերի զարգացումներով, սակայն պետք է հիշել, որ դեկտեմբերին ոսկերչական գործունեության հետևանքով տնտեսական աճի բարձր տեմպեր ևս առկա էին: Հետևաբար հաջորդ ամիսներին պետք է ուշադրությունը սևեռել հարկային եկամուտների դինամիկային, քանի որ դրանից է կախված պետական բյուջեի կատարման ապահովումը:

«**ԼՈՒՅՍ հիմնադրամ**» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «**ԼՈՒՅՍ**» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «**ԼՈՒՅՍ հիմնադրամ**» գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: